Հ-42

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿԱՐԵՆ ՀՐԱՆՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՋՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ 1945-2004 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Է. 00.02 - «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

մասնագիտությամբ

պատմական գիտությունների թեկնածուի

գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2005

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝	պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ն. Հ. Հովհաննիսյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Ա. Բայբուրդյան պատմական գիտությունների թեկնածու Ս. Ա. Մանուկյան
Առաջատար կազմակերպություն՝	Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2005թ. նոյեմբերի 16-ին, ժ. 13:00-ին, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 006 մասնագիտական խորհրդում (հասցե՝ Երևան 375019, Մարշալ Բաղրամյան պողոտա, 24 գ)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2005թ. հոկտեմբերի 16-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար Պ. Չոբանյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մերձավորարևելյան ջրի հիմնախնդրի, տարածաշրջանային հարաբերություններում ջրի գործոնի քաղաքական, տնտեսական և իրավական նշանակության ուսումնասիրությունը խիստ արդիական է: Մերձավոր Արևելքում տեղի ունեցող դինամիկ գործընթացների տրամաբանությունը հասկանալու առումով: Արաբա-բուրքական և արաբա-իսրայելական բարդ հարաբերությունների իրողությամբ, ինչպես նաև Մերձավոր Արևելքի էներգակիրների աշխարհաքաղաքական նշանակությամբ պայմանավորված՝ տարածաշրջանային այս խնդիրն ունի միջազգային-քաղաքական մեծ հնչեղություն:

Թեման արդիական է այն առումով, որ արդեն 21-րդ դարասկզբին ավելի ու ավելի ահագնացող են դառնում բնապահպանական մարտահրավերները մարդկությանը, իսկ ջրի խնդիրը դրանց շարքում առաջիններից է: Ներկայումս բազմաթիվ հետազոտողներ առաջ են քաշում այն տեսակետը, թե արդի դարաշրջանում պատերազմներն առավելապես կլինեն ջրի համար, և որ Մերձավոր Արևելքը ջրի խնդրի կիզակետն է: Սակավաջուր այս տարածաշրջանում բնակչության աճի՝ համաշխարհային միջինից բարձր տոկոսն ակնհայտորեն վկայում է այստեղ մեկ շնչին ընկնող ջրի մասնաբաժնի նվազման մասին: Սա նշանակում է, որ 21-րդ դարում ջրի գործոնը մերձավորարևելյան տարածաշրջանային հարաբերություններում ոչ միայն կշարունակի կարևոր դեր խաղալ, այլև ձեռք կբերի առանձնահատուկ, անգամ առանցքային նշանակություն:

1990-ական թվականներին սկիզբ առած մերձավորարևելյան խաղաղ կարգավորման գործընթացում ամենախնդրահարույց հարցերից մեկը ջրի հարցն էր,

որի շուրջ այդպես էլ հնարավոր չեղավ համընդգրկուն համաձայնության գալ: Արաբա-իսրայելական համատեքստում միայն Հորդանանն ու Իսրայելը կարողացան ընդհանուր հայտարարի գալ, սակայն ջրի վերաբերյալ նրանց պայմանավորվածությունները լուրջ փորձություններ ապրեցին համաձայնագիրը ստորագրելու հաջորդ տարիներին և այժմ էլ անցնում են ժամանակի փորձությունը: Սիրիա-իսրայելական և պաղեստինա-իսրայելական հարաբերություններում նույնպես ջուրն առանցքային դեր ունի և խաղաղության հասնելու ամենամեծ խոչընդոտներից մեկն է: Թուրք-սիրիա-իրաքյան հարաբերություններում ջրի գործոնն ունեցել է և ունի հրատապ քաղաքական-տնտեսական նշանակություն, որը մեծապես ազդում է նրանց միջպետական հարաբերությունների վրա:

Հայաստանը հարակից է Մերձավոր Արևելքի տարածաշրջանին և ներգաղթված այս տարածաշրջանի քաղաքական գործընթացներին, հետևապես պետք է պատրաստ լինի դեպքերի հեռանկարային զարգացմանը: Հույժ կարևոր է մերձավորարևելյան ջրի հիմնախնդրի ուսումնասիրությունը՝ նկատի առնելով հայկական երկու հանրապետությունների բացառիկ հիդրոստրատեգիական դիրքը հարևանների նկատմամբ: Այնպես, ինչպես Թուրքիան է հակադրում իր ջուրը արաբական նավթին, այնպես էլ հայերս ջրի գործոնի ճիշտ օգտագործմամբ կարող ենք մեծացնել հայկական երկու հանրապետությունների տեսակարար կշիռը Հարավային Կովկասում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության թեմայի ընտրության նպատակն է հետազոտել Եփրատ-Տիգրիսի և Հորդանանի գետավազանների երկրների հարաբերություններում ջրի գործոնի առանձնահատկությունները: Մերձավոր Արևելքում ջրի հիմնախնդրի ամբողջական պատկերը ներկայացնելու համար հեղինակն իր առջև խնդիր է դրել.

1. Իրականացված ջրային զարգացման ծրագրերի վերլուծության հիման վրա ցույց տալ մերձավորարևելյան միջազգային ջրահոսքերի ջրերի օգտագործման տարածաշրջանային քաղաքական նշանակությունը:
2. Ուսումնասիրել միջազգային գետային իրավունքի զարգացումը 20-րդ դարի երկրորդ կեսին և վերլուծել միջազգային ջրահոսքերի օգտագործման վերաբերյալ գոյություն ունեցող միջազգային իրավական փաստաթղթերը:
3. Դիտարկել ջրօգտագործման վերաբերյալ տարածաշրջանի երկրների քաղաքականությունն ու մոտեցումները իրավական տեսանկյունից և բացահայտել տարածաշրջանի ջրահոսքերի օգտագործման վերաբերյալ համընդգրկուն համաձայնագրերի բացակայության պատճառները:
4. Թուրքական ջրային ծրագրերի համատեքստում անդրադառնալ քրդական գործոնի դերին:
5. Ուսումնասիրել մերձավորարևելյան խաղաղ կարգավորման գործընթացում ջրի գործոնի նշանակությունը:
6. Բացահայտել Արևմտյան ափի և Ղազայի ստորգետնյա ջրահոսքերի դերը պաղեստինա-իսրայելական հակամարտության կարգավորման գործում:
7. Գնահատել ջրի խնդրի շուրջ հնարավոր զարգացումները և ձևոք բերված համաձայնությունների կենսակայունությունը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության թեման՝ «Ջրի հիմնախնդիրը Մերձավոր Արևելքում (1945-2004թթ.)», հայրենական պատմագրության կողմից ուսումնասիրված չէ: Կան, իհարկե, տեղեկատվական բնույթի մի քանի աշխատանքներ և որոշ ուսումնասիրողների կողմից

այլ աշխատանքների սահմաններում այս խնդրին անդրադարձեր, սակայն հարցը տարածաշրջանային երկկողմ և բազմակողմ հարաբերությունների լույսի ներքո համընդգրկուն կերպով՝ ջրի գործոնի տնտեսական, իրավական և քաղաքական կողմերի վերլուծությամբ, հետազոտված չէ: Ներկա աշխատությունն իր կառուցվածքով և քննարկվող խնդիրների շարքով հայրենական պատմագրության մեջ առաջին ուսումնասիրությունն է, որտեղ փորձ է արվում համակողմանիորեն վերլուծել Մերձավոր Արևելքում 1945-2004թթ. ջրային զարգացման ծրագրերը, դրանց ազդեցությունն ու նշանակությունը տարածաշրջանի քաղաքական գործընթացներում: Պետք է նշել, որ նույնիսկ հետխորհրդային ռուսական պատմագրությունը պատշաճ կերպով չի անդրադարձել այս խնդրին: Բազմաթիվ են արաբ և հատկապես արևմտյան հեղինակների հետազոտությունները նշյալ խնդրի վերաբերյալ, սակայն խնդրի ուսումնասիրության ընթացքում չենք հանդիպել մի աշխատանքի, որտեղ համակողմանիորեն քննարկվեն մերձավորարևելյան ջրի խնդրի քաղաքական, տնտեսական և իրավական կողմերը՝ տարածաշրջանային ընդհանուր քաղաքական գործընթացների համատեքստում:

Սույն աշխատանքում նորովի է մեկնաբանվում ուսումնասիրվող ժամանակաշրջանում տարածաշրջանի երկրների ջրային քաղաքականությունը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ժամանակագրական առումով ատենախոսությունն ընդգրկում է 1945-2004թթ. ժամանակահատվածը՝ սկսած Երկրորդ աշխարհամարտի ավարտից մինչև մեր օրերը: Այս ժամանակահատվածի ընտրությունը պատահական չէ. որպես միջպետական հարաբերությունների գործոն ջրի հիմնախնդիրը ավելի ու ավելի կարևոր նշանակություն ձեռք բերեց, երբ Մերձավոր Արևելքի երկրները մեկը մյուսի հետևից

անկախություն ձեռք բերելով՝ սկսեցին ձեռնարկել ջրային զարգացման ազգային ծրագրեր: Իհարկե, երկու աշխարհամարտերի միջև ընկած ժամանակահատվածում էլ ջրի խնդիրը միջպետական հարաբերությունների հարց էր, սակայն տարածաշրջանի քաղաքական իրողություններն այլ էին. այդ ժամանակաշրջանում Եփրատի ավազանում Թուրքիայի «ղեմ» հանդես էին գալիս Սիրիայի և Իրաքի մանդատատեր Ֆրանսիան ու Մեծ Բրիտանիան, որոնք շատ ավելի ամուր դիրքերից էին բանակցում թուրքերի հետ, իսկ Հորդանանի ավազանում Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան ջրի շուրջ ծագող հարցերը լուծում էին տնտեսական նպատակահարմարության սկզբունքից ելնելով: 1945-2004թթ. ժամանակահատվածի ընտրությունը պայմանավորված է նաև այն փաստով, որ այս ընթացքում, անգլիական և ֆրանսիական մանդատի վերացումից և արաբական անկախ պետությունների կազմավորումից հետո ջրային զարգացման ծրագրերն անմիջապես թափ ստացան տարածաշրջանում՝ տնտեսական հարթությունից տեղափոխվելով քաղաքական հարթություն և միջպետական հարաբերությունների ոլորտ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ատենախոսության մեթոդաբանական հիմքում դրված են ուսումնասիրվող ժամանակաշրջանում մերձավորարևելյան միջազգային ջրահոսքերի նկատմամբ տարածաշրջանի պետությունների իրավական, տնտեսական և քաղաքական ասպեկտների, դրանց հետ կապված հարցադրումների և տեսակետների քննական մեկնության և փաստերի համեմատական-համադրական վերլուծության սկզբունքները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության մեջ առաջ քաշվող դրույթները, արվող եզրահանգումներն ու մեկնաբանությունները կարող են օգտակար լինել Մերձավոր Արևելքի տարածաշրջանի արդի քաղաքական խնդիրներն ուսումնասիրողների, ինչպես նաև էկոլոգիական քաղաքականության հարցերով զբաղվող մասնագետների համար:

Աշխատանքի եզրահանգումները կարևոր են Հայաստանի արտաքին քաղաքականության պատասխանատուների համար՝ տարածաշրջանում ջրի գործոնի դերն ու նշանակությունը գնահատելու և տարածաշրջանային քաղաքականության ճիշտ մոտեցումներ մշակելու համար: Ատենախոսության վերլուծությունները կարող են հատկապես օգտակար լինել Հայաստանի անմիջական հարևանների հետ քաղաքական-տնտեսական հարաբերությունները կառուցելու տեսանկյունից՝ նկատի ունենալով նրա բացառիկ հիդրոստրատեգիական դիրքը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱԲՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատությունը քննարկվել և նախնական հավանության է արժանացել ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Արաբական երկրների բաժնում: Դրա հիմնական դրույթներն ու եզրակացությունները ներկայացվել են հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում ու թեզերում, Երիտասարդ արևելագետների հանրապետական 23-րդ և 24-րդ գիտական նստաշրջաններում և մի շարք այլ գիտաժողովներում ընթերցված զեկուցումներում:

Հեղինակի հրատարակած հոդվածների ցանկը ներկայացված է սեղմագրի վերջում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսությունը գրվել է հայերեն, անգլերեն, արաբերեն և ռուսերեն լեզուներով տարաբնույթ աղբյուրների և ուսումնասիրությունների հիման վրա: Ուսումնասիրությանը մեծապես նպաստել են արաբ և արևմտյան հետազոտողների՝ քննարկվող թեմային նվիրված արժեքավոր աշխատությունները, ինչպես նաև պաշտոնական հրատարակությունները, քաղաքական և պետական գործիչների հուշագրությունները, հայտարարությունները և պարբերականները:

Ուսումնասիրության համար որպես կարևոր սկզբնաղբյուր ծառայել են մի շարք կազմակերպությունների, ինչպես նաև Թուրքիայի, Իսրայելի, Հորդանանի, Պաղեստինի, Ռուսաստանի արտգործնախարարությունների և ԱՄՆ-ի Պետքարտուղարության ինտերնետային կայքերում զետեղված պայմանագրերն ու այլ փաստաթղթեր: Հարկ է նշել հատկապես ՄԱԿ-ի «Միջազգային պայմանագրերի ժողովածու» ինտերնետային կայքը,[1] Միջազգային ջրային իրավունք ինտերնետային նախագիծը,[2] Օրեգոնի պետական համալսարանի Անդրսահմանային քաղցրահամ ջրահոսքերի վերաբերյալ պայմանագրերի ինտերնետային կայքը,[3] ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզական գործակալության ամենամյա համաշխարհային փաստագիր վերլուծությունները,[4] Միջազգային ճգնժամային խումբ վերլուծական հաստատության,[5] Համաշխարհային բանկի ու այլ միջազգային կազմակերպությունների տարաբնույթ հաշվետվություններ:

[1] United Nations Treaty Collection, www.untreaty.un.org .
[2] International Water Law Project website, www.internationalwaterlaw.org .
[3] International Freshwater Treaties Database, www.transboundarywaters.orst.edu .
[4] CIA World Fact Book, www.cia.gov/cia/publications/factbook .
[5] International Crisis Group Reports on the Middle East, www.icg.org .

Աշխատանքը գրելիս կարևոր են եղել միջազգային գետային իրավունքի կարևորագույն փաստաթղթերից մեկի՝ ՄԱԿ-ի Միջազգային ջրահոսքերի ոչ նավարկելի օգտագործման իրավունքի մասին 1997թ. կոնվենցիայի հիմնադրույթները,[6] մանդատային ժամանակաշրջանում ստորագրված մի շարք երկկողմ համաձայնագրեր,[7] ինչպես նաև քննարկվող ժամանակահատվածում Մերձավոր Արևելքի պետությունների միջև ջրօգտագործումն արծարծող երկկողմ համաձայանգրերը[8]: Որպես կարևոր սկրնաղբյուր ծառայել են 1953-1955թթ. Ջոնսթոնի առաքելության զեկույցը,[9] ինչպես նաև մի շարք բազմակողմ միջազգային իրավական փաստաթղթեր[10]:

Արժեքավոր աղբյուրների շարքում պետք է նշել լիբանանյան «աս Սաֆիր», «ան Նահար», «ալ Իթթիհադ», սիրիական «Թիշրին», «աս Սաուրա», «ալ Բաաս», «Սիրիա Թայմզ», հորդանանյան «աղ Դուսթուր», «Շիհան», «առ Ռայ», «Ջորդան Թայմզ», եգիպտական «Ախբար ալ Յաում», իրաքյան «ալ Ջումհուրիա», բրիտանական «աշ Շարկ ալ Առսատ», «ալ Հայաթ», թուրքական «Թըրքիշ Դեյլի Նյուզ» և իսրայելական «Հաարեց» պարբերականները, որտեղ տեղ են գտել ինչպես պետական ու քաղաքական գործիչների հայտարարություններ ու հարցազրույցներ, այնպես էլ ջրի խնդրի վերաբերյալ տարաբնույթ վերլուծական հոդվածներ:

Մերձավորարևելյան ջրի հիմնախնդիրը հայ պատմագրության կողմից պատշաճ ուշադրության չի արժանացել: Հայ հեղինակներից այս խնդրին առաջիններ անդրադարձել է Ն. Հովհաննիսյանն իր «Իրաքյան Հանրապետության հարաբերությունները Արաբական Արևելքի երկրների հետ»[11] մենագրության մեջ, որտեղ վերլուծվում են 1975թ. սիրիա-իրաքյան ջրային ճգնաժամի պատճառները: Պետք է նշել նաև Է. Բեգիջանյանի «Ջրի խնդիրը Միջին Արևելքում»[12] և Վ. Ջիջիյանի «Ջրի դիվանագիտությունը Միջին Արևելքում»[13] տեղեկատվական բնույթի աշխատությունները: Հայ հեղինակներից ջրի խնդրին անդրադարձել է նաև Ռ. Կարապետյանն իր «Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն» աշխատության մեջ՝ տրամադրելով առանձին գլուխ՝ «Ջրային հակամարտությունը Մերձավոր Արևելքում»[14]: Ատենախոսության մեջ օգտագործվել են նաև հայ հեղինակների՝ Մերձավոր Արևելքի այլ խնդիրներին նվիրված, այդ թվում Ն. Հովհաննիսյանի,[15] Վ. Ջիջիյանի,[16] Ա. Բայրամյանի, [17] Ա. Մանուչարյանի,[18] Ռ. Կարապետյանի[19] աշխատությունները:

---

[6] United Nations Convention on the Law of the Non-Navigational Uses of International Watercourses, 1997 www.internationalwaterlaw.org .

[7] Accord Turco-Franҫais, 20.10.1921; Franco-British Convention on Certain Points Connected with the Mandates for Syria and Lebanon, Palestine and Mesopotamia, signed at Paris, December 23.12.1920; Exchange of Notes Constituting an Agreement between the British and French Governments Respecting the Boundary Line between Syria and Palestine from the Mediterranean to El Hamme, Paris, March 7, 1923; Agreement of Good Neighbourly Relations concluded between the British and French Governments on behalf of the territories of Palestine, on the one part, and on behalf of Syria and Great Lebanon, on the other part, 2.02.1926 http://ocid.nacse.org .

[8] Iraqi-Turkish Protocol on the Regulation of the Tigris and Euphrates Waters and of their Tributaries, annexed to the *Treaty of Friendship and Neighbourly Relations between Iraq and Turkey,* 29.03.1946; Syrian-Jordanian Agreement on the Utilization of the Yarmuk Waters, 4.06.1953; Syrian-Jordanian Agreement on the Utilization of the Yarmuk River, 3.09.1987; Joint Minutes Concerning the Provisional Division of the Euphrates Waters between the Republic of Iraq and the Arab Republic of Syria, signed in Baghdad, 17.03.1989; The Syrian-Iraqi Agreement on the Utilization of the Euphrates Waters, signed April 1990; Treaty of Peace Between the State of Israel and the Hashemite Kingdom of Jordan signed in 1994; Israeli-Palestinian Interim Agreement on the West Bank and Gaza Strip, 28.09.1995; Declaration of Principles for Cooperation on Water-related Matters and New and Additional Water Resources, Oslo, 13.02.1996; Turkish-Syrian Agreement, signed in Adana, October, 1998; Joint Communique between the Republic of Turkey Prime Ministry Southeastern Anatolia Project Regional Development Administration (GAP) and the Arab Republic of Syria Ministry of Irrigation General Organization for Land Development, Ankara, 23.08.2001.

[9] The Johnston Negotiations: Israel, Jordan, Syria, Lebanon, Document written by Oliver Troxen, State of Johnston Mission, and distributed informally by Department at the end of Johnston negotiations, 12.31.1955.

[10] Рио-де-Жанейрская декларация по окружающей среде и развитию, Утверждена Конференцией ООН по окружающей среде и развитию, Рио-де-Жанейро, 3-14 июня 1992 года; Approaches towards the Settlement of the Arab-Israeli Conflict and the Question of Palestine: Peace Conference on the Middle East, October 1991, (New York, United Nations, November 1991).

[11] Оганесян. Н.О., *Отношения Иракской Республики со странами Арабского Востока*, Ереван. 1985г. .

[12] Բեգիջանյան Է., Ջրի խնդիրը Միջին Արևելքում, Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, Երևան, 1995թ.:

[13] Ջիջիյան Վ., *Ջրի դիվանագիտությունը Միջին Արևելքում,* Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, Երևան, 1998թ.:

[14] Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Երևան, 2003թ.:

[15] Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների նկատմամբ Թուրքիայի տարածքային հավակնությունները նորագույն շրջանում, *Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ,* հ. XIII, Երևան, 2004թ.; *Իրան, Այաթոլլահ Խոմեյնիի դարաշրջանը,* ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2004թ.,

Օտարազգի հեղինակների առավել արժեքավոր աշխատությունների շարքում պետք է նշել Ջ. Բոլլոքի և Ա. Դարվիշի,[20] Ս. Լիբիսզեվսկու,[21] Փ. Գլեյքի,[22] Ն. Սամանի,[23] Թ. Մաջզուբի,[24] Հ. Բարքիի,[25] Ա. Էլհանսի,[26] Ջ. Իսաաքի[27] գործերը: Արժեքավոր են նաև Օրեգոնի պետական համալսարանի պրոֆեսոր Ա. Վոլֆի աշխատությունները[28] և հատկապես նրա նախաձեռնությամբ ստեղծված Անդրսահմանային քաղցրահամ ջրահոսքերի վերաբերյալ պայմանագրերի ինտերնետային կայքը, որտեղ բնօրինակով և թարգմանաբար ներկայացված են սահմանը հատող ջրահոսքերի շուրջ առկա գրեթե բոլոր միջազգային պայմանագրերը:

Hovhannisyan N., *Formation of the Transcaucassian – Middle Eastern Geopolitical Region,* National Academy of Sciences of Armenia, Institute of Oriental Studuies, Yerevan, 2000.

[16] Ջիջիյան Վ., *Իրաքը և աշխարհաքաղաքական նոր զարգացումները Մերձավոր Արևելքում,* Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, Երևան, 2003թ.:

[17] Բայրամյան Ա., *Ալեքսանդրետի սանջաքի հարցը և միջազգային դիվանագիտությունը 1936-1939թթ.,* ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան,1998թ.:

[18] Манучарян А., ФРГ и Ближневосточный конфликт, Ереван, 1991г..

[19] Կարապետյան Ռ., *Սիրիա-ամերիկյան հարաբերությունները 1967-1996թթ.,* Երևան, 2000թ.:

[20] Bulloch J., Darwish A., *Water Wars: Coming Conflicts in the Middle East,* Victor Gollantz, London, 1993.

[21] Libiszewsky S., *Water Disputes in the Jordan Basin Region and their Role in the Resolution of the Arab-Israeli Conflict.* ENCOP Occasional Paper No 13, Center for Security Policy and Conflict Research/ Swiss Peace Foundation. Zurich/Berne, 1995.

[22] Gleick P.H., ed., *Water in Crisis: A Guide to the World's Fresh Water Resources,* Oxford University Press, New York – Oxford, 1993.

[23] نبيل السمان، المياه و سلام الشرق الأوسط، دمشق، ١٩٩٨، مشكيلة المياه في الشرق الأوسط، السفير، ٩/٢/١٩٩٤

[24] طارق المجذوب، نظرية الإتصال الجوفي بين الليطاني و الأردن، النهار، ٥/٧/١٩٩٤، النظام القانوني للمجاري المائية ، النهار، ٥/٧/١٩٩٤

[25] Barkey H.J., "Hemmed in by Circumstances: Turkey and Iraq since the Gulf War," *Middle East Policy,* vol. VII, no 4, October 2000; Barkey H.J., Fuller G.E., "Turkey's Kurdish Question: Critical Turning Points and Missed Opportunities," *Middle East Journal,* no I, Winter 1997; Barkey H., ed., *Reluctant Neighbor: Turkey's Role in the Middle East,* US Institute of Peace Press, Washington, D.C., 1996.

[26] Elhance A.P., *Hydropolitics in the Third World: Conflict and Cooperation in International River Basins,* United States Institute of Peace Press, Washington, D.C., 1999.

[27] Isaac J., Al-Juneidi F., Sabbah W., Abu Amriyeh M., *The Status of the Environment in the West Bank,* Applied Research Institute – Jerusalem, 1997; *Arab Agriculture in a Globalized World: Constraints and Potentials,* Applied Research Institute – Jerusalem, 2001; *Environmental Degradation and the Israeli-Palestinian Conflict,* Applied Research Institute – Jerusalem, 2003; *Energy and its Impact on the Environment,* Applied Research Institute – Jerusalem, 2001.

[28] Wolf A.T., *"Hydrostrategic" Territory in the Jordan Basin: Water, War, and the Arab-Israeli Peace Negotiations,* Paper presented at a conference "Water: A Trigger for Conflict/A Reason for Cooperation," March 1996, www.diak.org/water/CES%20Hydrostrategic%20Territory.htm ; *Hydropolitics along the Jordan River,* UN University Press, Tokyo-New York-Paris, 1995; *Middle East Water Conflicts and Directions for Conflict Resolution,* International Food Policy Research Institute, Washington, D.C., 1996.

Աշխատանքը գրելիս կարևոր է եղել Ջ. Ալանի ու Շ. Մալաթի խմբագրած «Ջուրը Մերձավոր Արևելքում. իրավական, քաղաքական և առևտրային նշանակությունը» գիրքը,[29] որտեղ, ի թիվս այլ խնդիրների, քննարկվում են ջրօգտագործման վերաբերյալ զանազան իրավական մոտեցումներ: Ուշագրավ են նաև ռուսաստանցի հեղինակ Կ. Խամզինի հոդվածները, որոնք շոշափում են ջրի գործոնի նշանակությունը Մերձավոր Արևելքի քաղաքականության մեջ[30]:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնցից յուրաքանչյուրը համապատասխանաբար կազմված է ենթագլուխներից, վերջաբանից, օգտագործված գրականության ու աղբյուրների ցանկից և հավելվածից:

Ներածության մեջ նշվում է ուսումնասիրության թեմայի արդիականությունը, նպատակները ու խնդիրները, հիմնավորվում է աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, աշխատության մեթոդաբանական հիմքը և գիտական նորույթը, ինչպես նաև ներկայացվում է օգտագործված աղբյուրների և գրականության համառոտ տեսությունը:

<u>Առաջին գլխում՝ «Ջրի գործոնը Մերձավոր Արևելքում»,</u> լուսաբանվում են մերձավորարևելյան ջրի հիմնախնդրի քաղաքական, տնտեսական և իրավական կողմերը: Անդրադարձ է կատարվում տարածաշրջանում մինչև Երկրորդ աշխարհամարտը իրականացված ջրային ծրագրերին, խոսվում է ջրի քաղաքական

---

29 Allan J., Mallat Ch., eds, Water in the Middle East: Legal, Political and Commercial Implications, Tauris Publishers, London – New York, 1995. Mallat Ch., "The Quest for Water Use Principles: Reflections on Shari'a and Custom in the Middle East," in Water in the Middle East: Legal, Political and Commercial Implications.

30 Хамзин К.З., "Проблема распределения водных ресурсов между Израилем и соседними государствами," Ближний Восток и Современность (выпуск третий), М., 1997; Зерна нового конфликта на Ближнем Востоке всходят на воде, Публикация Института изучения Израиля и Ближнего Востока, М., 1998.

գործոնի հարաճուն դերի մասին: Առաջին գլխում փորձ է արվում նաև տարածաշրջանի երկրների մակրոտնտեսական ցուցանիշների հիման վրա բացահայտել առկա ջրային հիմնախնդրի տնտեսական պատճառները: Ջրի հիմնախնդիրը քննարկվում է նաև միջազգային իրավունքի լույսի ներքո, խոսվում է 20-րդ դարի 2-րդ կեսին միջազգային գետային իրավունքի զարգացման և կոդիֆիկացման մասին, լուսաբանվում են միջազգային գետերի ջրերի օգտագործումն ու բաժանումը կարգավորող գոյություն ունեցող միջազգային իրավական փաստաթղթերը, գնահատվում դրանց դերը մերձավորարևելյան ջրային վեճերի կարգավորման գործում: Մանրամասն վերլուծվում են միջազգային գետային իրավունքի հիմնարար փաստաթղթերից մեկի՝ Միջազգային ջրահոսքերի ոչ նավարկելի օգտագործման վերաբերյալ ՄԱԿ-ի 1997թ. կոնվենցիայի դրույթները և դրանց նշանակությունը մերձավորարևելյան ջրային հիմնախնդրի կարգավորման գործում:

<u>Երկրորդ գլուխը՝ «Ջրի խնդիրը Եփրատ և Տիգրիս գետերի ավազանում»,</u> նվիրված է նշյալ գետերի ջրօգտագործման շուրջ Թուրքիա-Սիրիա-Իրաք երկկողմ և բազմակողմ հարաբերությունների վերլուծությանը, գետավազանի երկրների ջրային ծրագրերի և հատկապես Հարավարևելյան Անատոլիայի զարգացման թուրքական ջրային ծրագրի տարածաշրջանային քաղաքական-տնտեսական նշանակությանը, թուրք-արաբական հարաբերություններում ջրի խնդրի հետ կապված քրդական գործոնին, ջրօգտագործման վերաբերյալ գետափնյա երկրների պաշտոնական տեսակետներին և համագործակցության փորձերին: Երկրորդ գլխում փորձ է արվում նաև բացահայտել գետափնյա երկրների միջև ջրի շուրջ առկա հակասությունների պատճառները և գնահատել դրանց ընդհանուր քաղաքական նշանակությունը երկկողմ, եռակողմ և տարածաշրջանային ընդհանուր խնդիրների համատեքստում: Գնահատվում է ջրի գործոնի հարաճուն դերը Եփրատ-Տիգրիսի գետավազանի

երկրների հարաբերություններում, եզրակացություններ են արվում այդ հարաբերությունների հնարավոր հեռանկարային զարգացումների մասին:

<u>Երրորդ գլուխը՝ «Ջրի գործոնը Հորդանան գետի ավազանում»,</u> վերլուծում է ջրի գործոնի դերն ընդհանուր արաբա-իսրայելական հարաբերությունների համատեքստում: Փորձ է արվում գնահատել մինչև Երկրորդ աշխարհամարտը եղած հրեական և արաբական ջրային ծրագրերի քաղաքական նշանակությունը և դրանց հետագա դերը, լուսաբանվում է ջրի գործոնի դերը Իսրայել պետության ստեղծումից հետո՝ շոշափելով Հորդանանի գետավազանի, Արևմտյան ափի և Ղազայի հատվածի ստորգետնյա ջրահոսքերի, ինչպես նաև Լիտանի գետի նշանակությունը մերձավորարևելյան խաղաղ կարգավորման գործում: Այս գլխում լուսաբանվում է արաբների և Իսրայելի միջև ջրի հարցում համագործակցություն հաստատելու ամերիկացի բանագնաց Ջոնսթոնի 1953-1955թթ. բանակցությունների և դրանց ձախողման, իսրայելական ու արաբական միակողմանի ձեռնարկումների մասին, վերլուծվում է 1967 թվականի արաբա-իսրայելական պատերազմից հետո ստեղծված հիդրոքաղաքական իրադրությունը և ջրի գործոնի դերը 1967-ին հաջորդած տարիներին: Ջրի խնդիրը քննարկվում է Իսրայելի՝ Հորդանանի, Սիրիայի, Լիբանանի և Պաղեստինյան ինքնավարության հետ երկկողմ հարաբերությունների լույսի ներքո: Երրորդ գլխում նաև փորձ է արվում ցույց տալ ջրի գործոնի դերը 1990-ական թվականներին սկիզբ առած մերձավորարևելյան խաղաղ կարգավորման գործում, քննարկվում են 1994 թվականի Հորդանանա-իսրայելական համաձայնագրի ջրի վերաբերյալ դրույթները և դրանց կենսակայունությունը, գնահատվում է Գոլանի ջրային աղբյուրների կարևորությունը սիրիա-իսրայելական հարաբերություններում, խոսվում է իսրայելա-լիբանանյան հարաբերություններում ջրի գործոնի, Հարավային Լիբանանի բռնազավթման ժամանակ Իսրայելի «ջրային հավակնությունների» մասին: Այս գլխում խոսվում է նաև Պաղեստինյան հիմնախնդրի ջրային ասպեկտի մասին,

քննարկվում են Օսլոյի համաձայնագրերի՝ ջրի վերաբերյալ պայմանավորվածությունները, եզրահանգումներ են արվում արաբա-իսրայելական հարաբերություններում ջրային հակասությունների վերաբերյալ, փորձ է արվում ցույց տալ ջրի շուրջ հեռանկարային հնարավոր զարգացումները:

<u>Վերջաբանում</u> ամփոփվում են ատենախոսության հիմնական արդյունքները, արվում են հետևյալ եզրակացությունները.

1. Թուրք-սիրիական հարաբերությունների օրակարգում Եփրատի ջրերի շուրջ վեճն ամենագլխավոր խնդիրն է, որը երկրորդ պլան է մղել Ալեքսանդրետի սանջաքի նկատմամբ ինքնիշխանությունը վերականգնելու Դամասկոսի ձգտումը: Սիրիայի աջակցությունը քուրդ անջատողականներին Թուրքիայում անմիջականորեն կապված է վերջինիս ջրային քաղաքականության հետ: Թուրք-սիրիական առևտրատնտեսական կապերը նույնպես որոշակիորեն կախված են Անկարայի ջրային ռազմավարությունից:
2. Սիրիա-իրաքյան հարաբերություններում ջրի գործոնը, մասնավորապես Եփրատի ջրաբաժանման հարցը, նույնպես կարևոր դեր ունի: Սակայն, ի տարբերություն թուրք-սիրիական հարաբերությունների, Դամասկոսի և Բաղդադի հարաբերություններին այն ավելի քիչ լարվածություն է հաղորդում, որովհետև Իրաքն ավելի շատ ապավինում է Տիգրիսի ջրերին, հարուստ է էներգակիր պաշարներով, Սիրիայի հետ կիսում է միևնույն կուլտուրական ժառանգությունը:
3. Թուրք-իրաքյան հարաբերություններում ջրի խնդիրը նույնպես առանցքային է, որն առնչվում է քրդական հարցի, Մոսուլի շրջանի նկատմամբ Թուրքիայի տարածքային հավակնությունների, իրաքյան նավթի տեղափոխման և, ընդհանրապես, երկու երկրների առևտրատնտեսական հարաբերությունների հետ: Սակայն, ի տարբերություն սիրիա-թուրքական հարաբերությունների, իրաք-թուրքական հարաբերություններում ջրի գործոնը նվազ խնդրահարույց է,

քանի որ թուրքական ջրային ծրագիրը կենտրոնացած է Եփրատի վրա, իսկ Իրաքի տնտեսությունն ավելի շատ կախված է Տիգրիսի ջրերից: Նաև՝ երկարամյա զինված հակամարտությունների հետևանքով Իրաքի ջրային ենթակառուցվածքները լուրջ վնաս են կրել, որի հետևանքով Իրաքը սնունդ արտահանող երկրից վերածվել է սնունդ ներմուծող երկրի:
4. Հորդանանա-իսրայելական հարաբերություններում ջրի խնդիրն առանցքային է: Թեև 1994թ. հաշտությամբ երկու երկրները պայմանավորվեցին ջրաբաժանման քվոտաների շուրջ, սակայն դա տեղի ունեցավ միակողմանիորեն՝ առանց Հորդանանի գետավազանի բոլոր երկրների շահերը հաշվի առնելու: Դա նշանակում է, որ արաբա-իսրայելական համապարփակ խաղաղության հեռանկարում հարկավոր կլինի վերանայել հորդանանա-իսրայելական ջրային համաձայնությունը:
5. Սիրիա-իսրայելական հարաբերություններում Գոլանի ջրային աղբյուրների խնդիրն ամենամեծ խոչընդոտն է խաղաղության ճանապարհին: Իսրայելի համար այդ ջրային աղբյուրների անվտանգության ապահովումն ավելի կարևոր է, քան Գոլանի ռազմա-ստրատեգիական նշանակությունը:
6. Լիբանանա-իսրայելական հարաբերություններում ջրի խնդիրը փոխկապված է երկկողմ հարաբերություններում առկա բազմաթիվ այլ խնդիրների հետ: Լիբանանի հարուստ ջրային պաշարները կարող են որոշակի «ամորտիզատորի» դեր խաղալ ընդհանուր արաբա-իսրայելական խաղաղության հաստատման ճանապարհին, եթե Իսրայելն իր ջրային հնարավոր կորուստները փոխհատուցի առևտրային հիմունքներով Լիբանանից ջրի ներմուծմամբ:
7. Պաղեստինա-իսրայելական հարաբերություններում Արևմտյան ափի և Ղազայի ստորգետնյա ջրերի շուրջ կենտրոնացած վեճը կարող է տարածվել նաև Հորդանան գետի ջրաբաժանման վրա, որովհետև պաղեստինցիները հնարավոր հաշտության համաձայնագրի շրջանակներում կարող են հավակնել նաև Հորդանան գետի ջրերին:

Հավելվածում ներկայացված է երկու քարտեզ՝ Եփրատ և Տիգրիս գետերի ավազանը և Հորդանան գետի ավազանը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Ջուրը որպես տարածաշրջանային գործոն Մերձավոր Արևելքում, *Իրան Նամէ*, h. 36, ապրիլ, 2001թ., էջ 58-59:
2. Թուրք-իսրայելական հարաբերությունները տարածաշրջանային անվտանգության համատեքստում, *Իրան Նամէ*, h. 37, դեկտեմբեր, 2001թ., էջ 53-55:
3. Ջուրը կարևորագույն ռեսուրս Մերձավոր Արևելքում, *Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ*, Հոդվածների ժողովածու, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2002թ., էջ 89-95:

Карен Грантович Арутюнян

"ПРОБЛЕМА ВОДЫ НА БЛИЖНЕМ ВОСТОКЕ В 1945-2004 гг."

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук

по специальности 07.00.02 – „Всеобщая история"

Защита состоится 16-го ноября 2005 г., по адресу г. Ереван 375019, просп. Маршала Баграмяна 24г., Институт Востоковедения НАН РА

РЕЗЮМЕ

Диссертационная работа посвящена изучению проблемы воды на Ближнем Востоке в 1945-2004 гг., роли водного фактора в региональных отношениях стран бассейнов рек Евфрат, Тигр и Иордан. Проблематика данной диссертационной работы

актуальна тем, что уже в нынешнем веке вопрос распределения вод международных водотоков в засушливых регионах планеты все больше влияет на формирование межгосударственных отношений. Ближний Восток является одним из густонаселенных районов мира с относительно меньшими запасами пресной воды, где наличие других политических конфликтов и антогонизмов, а также несовершенство международного речного права усугубляют данную проблему. Научное исследование ближневосточной водной проблемы имеет важное политическое и практическое значение для Республики Армения: во первых, чтобы лучше понять логику политических и экономических процессов в сопредельном Ближнем Востоке и, во вторых, чтобы осмыслить опыт ближневосточной водной политики, ибо Армения, своим высотным географическим положением и водными ресурсами может усилить собственное гидростратегическое преимущество на Южном Кавказе.

Диссертантом поставлены следующие задачи: выявить роль водного фактора в отношениях стран бассейнов рек Евфрат, Тигр и Иордан, изучить развитие и принципы права несудоходных видов использования международных водотоков, рассмотреть водную проблему в контексте многосторонних и двусторонних региональных отношений, выявить причины отсутствия всеобъемлющих многосторонних договоров по использованию региональных международных водотоков, представить взаимосвязь водной проблемы с курдским вопросом, исследовать роль водного фактора в ближневосточном мирном процессе, выявить значение подземных вод в арабо-израильских отношениях, оценить устойчивость достигнутых соглашений и перспективы развития ближневосточной водной проблемы.

Работа состоит из введения, трех глав, заключения, библиографии и приложения с картами.

В введении обосновывается актуальность темы исследоавания, ее научная новизна и практическое значение, формулируются цель и задачи работы, дается обзор использованных источников и литературы.

В первой главе - „Водный фактор на Ближнем Востоке", рассматриваются политические, экономические и правовые аспекты ближневосточной водной проблемы, детально анализируется один из важнейших международных документов международного речного права, Конвенция ООН 1997 г. о праве несудоходных видов использования международных водотоков, обосновывается несовершенство этой области права в урегулировании межгосударственных споров водного дележа.

Вторая глава - „Проблема воды в бассейне рек Евфрат и Тигр", посвящена исследованию двусторонних и многосторонних отношений между Турцией, Сирией и Ираком в области водопользования и водораспределения. Во второй главе исследуется воздействие турецкой Программы Развития Юго-Восточной Анатолий на экономику Сирии и Ирака, анализируется взаимосвязь водной политики и курдского вопроса, рассматривается значение водного фактора в двусторонних и многосторонних отношениях прибрежных стран Евфрата и Тигра, оцениваются возможности перспективного развития этих отношений.

Третья глава – „Водный фактор в бассейне реки Иордан", посвящена исследованию роли водного фактора в арабо-израильских отношениях. В ней рассматривается политическая сторона водной проблемы в иордано-израильских, сирийско-израильских, ливано-израильских и палестино-израильских отношениях. Анализируются причины провала американского посредничества в согласовании позиций водного дележа между прибрежными странами реки Иордан в 1950-х гг. и последовавшие односторонние водные программы; гидрополитические последствия

арабо-израильской войны 1967 года; роль водного фактора в ближневосточном мирном процессе в 1990-х гг. и т. д.

В заключении подводятся итоги исследования, обобщаются экономический, правовой и политический аспекты ближневосточной водной проблемы, а также резюмируются выводы о роли водного фактора в двусторонних отношениях прибрежных стран рек Евфрат, Тигр и Иордан.

В приложении представлены две карты бассейнов рек Евфрат, Тигр и Иордан.

Karen Harutyunyan

THE PROBLEM OF WATER IN THE MIDDLE EAST IN 1945-2004